

Proposed Project Briefs/Առաջարկվող նախագծի համառոտագիր

Project Name/Նախագծի անվանումը	Brief Description/Համառոտ նկարագրությունը	Timeline and Priority/Ժամանակացույցը և առաջնահերթությունը	Materials, Costs (if known)/Նյութեր, արժեքը (եթե հայտնի է)
1. Կանգառների տեղադրում/ Installation of bus stops	Համայնքում միջհամայնքային ճանապարհները գտնվում են բարեկարգ վիճակում, գործում է հասարակական տրանսպորտ, սակայն խաչմերուկներում չկան նախատեսված կանգառներ, որտեղ մարդիկ կարող են սպասել հասարակական տրանսպորտին՝ հատկապես անձրևային կամ ուժեղ արևային եղանակներին:/ Inter-community roads are in good condition - there is a public transportation, but there are no scheduled bus stops at intersections where people can wait for public transport, especially in rain or hot, sunny weather.	2 ամիս/2 months	3 կայանատեղիներ ծածկով, 600,000 ՀՀ դրամ/3 covered bus stops, AMD 600,000
2. Փոքր աղբամանների տեղադրում/ Installation of small bins	Շրջակա միջավայրը մաքուր պահելու համար մարդաշատ վայրերում, այդ թվում՝ կանգառներում, անհրաժեշտ է տեղադրել փոքր աղբամաններ:/ To keep the environment clean in public areas, including bus stops there is a need for installation of small bins.	20 օր/20 days	3 հատ աղբաման 90,000 ՀՀ դրամ/3 bins, AMD 90,000
3. Աղբահանության կազմակերպում և աղբը չնախատեսված վայրերում թափելը արգելող ցուցանակների տեղադրում	Համայնքում ձևավորվել է կամավորների խումբ, որոնք կազմակերպելու են աղբահանությունը: Չնախատեսված վայրերում տեղադրել աղբը թափելն արգելող, զգուշացնող ցուցանակներ, որը կնպաստի մաքուր համայնք ունենալուն:/ A group of volunteers in the community has been formed who will organize the garbage collection. Organizing a waste management and installation of signs prohibiting the shedding of garbage in prohibited places is necessary.	1 ամիս/1 months	7 ցուցանակներ, 60,000 ՀՀ դրամ/7 signs, AMD 60,000
4. Տեսարժան վայրերի	Անհրաժեշտ է բարելավել դեպի Շատիվանք	2 ամիս/2 months	Շինանյութ / Building Materials

<p>բարեկարգում/ Improvement of sightseeing places</p>	<p>տանող ճանապարհը: Այդ հատվածում է գտնվում նաև Անգղի ձոր կոչվող տարածքը, որտեղ տեղի են ունեցել պատմական իրադարձություններ: Ճանապարհը անբարեկարգ է, որը խանգարող հանգամանք է շատ զբոսաշրջիկների համար այցելելու Շատիվանք և պատմական նշանակություն ունեցող Անգղի Ձոր: / It is necessary to improve the road leading to the Shativank. There is also a place called the Valley of the Vulture, where historic events occurred. The road is in poor condition, which prevents a lot of tourists from visiting Shativank and the Valley of the Vulture.</p>		
<p>5. Գյուղական դահլիճ/Community hall</p>	<p>Համայնքն ունի 2119 բնակիչ, սակայն չունի համայնքային դահլիճ, որտեղ բնակիչները կարող են քննարկել բազմաթիվ հարցեր, բարձրաձայնել իրենց հուզող խնդիրները: Համայնքային դահլիճ ունենալու դեպքում կազմակերպվող ժողովները նաև կապ կհաստատեն գյուղացիների և քաղաքական գործիչների միջև, կքննարկվեն համայնքին վերաբերող շատ հարցեր: / The community has 2119 people, but doesn't have a community hall where residents can discuss many issues, to voice their concerns. If we had a Community hall the meetings will be organized on the linkages between farmers and politicians, will be discussing many issues concerning the community.</p>	<p>6 ամիս/6 months</p>	<p>Կառույց, 1 համակարգիչ, 1 պատճենահանող սարք, 1 սեղան, 12 աթոռ (տարածքը տրամադրվում է գյուղի կողմից), 3 մլն դրամ/Building, 1 PC, 1 Xerox, 1 table, 12 chairs (the land will be provided by village)</p>
<p>6. Լեզվի դասընթացներ/Language lessons</p>	<p>Շատին համայնքում արդեն կան գործող 4 հյուրաստներ, որոնք գիշերակացի, սննդի ծառայություններ են առաջարկում զբոսաշրջիկներին: Ինչպես նաև համայնքում կան բնակիչներ, ովքեր կարող են կազմակերպել սուրեր տարածաշրջանում, սակայն լեզու չիմանալու պատճառով դա չի իրականացվում: Այս տեսանկյունից անհրաժեշտություն կա</p>	<p>6 ամիս/6 months</p>	<p>Դասընթացները կկազմակերպվեն Շատինի միջին դպրոցում: Դասընթացները կվարի Խաղաղության կորպուսի կամավորը (ով համայնքում կլինի նույնպես ամսից) և Շատին համայնքի</p>

	<p>կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ վերոնշյալ թիրախային խմբերի համար:/There are already 4 operating guest houses in Shatin community, which offer accommodation and food services to tourists. As well, there are community residents who can organize tours in the region, but it is not implemented because of lack of the language knowledge. From this perspective, there is a need to organize training for English language courses.</p>		<p>գյուղապետարանի աշխատակից Լիանա Ստեփանյանը, ով ունի անգլերեն լեզվի կրթություն՝ այսինքն դասընթացները կկազմակերպվեն անվճար: Դասընթացների կազմակերպման համար անհրաժեշտ են գրքեր, նյութեր ինչպես նաև գրենական պիտույքներ, որոնց արժեքը կկազմի մոտավորապես 50,000 դրամ կամ գրքեր անգլերեն լեզվի սկսնակների համար:/ The courses will be held in Shatin Secondary School. The courses will be conducted by Peace Corps volunteer (who will be in community from November) and Shatin district municipality employee Liana Stepanyan, who has an English-language education, the courses will be free of charge. To organise the training there is a need for books, materials, as well as stationery items, which will cost approximately 50,000 dram. Not included are English language books for beginners.</p>
<p>7. <<Մեկ քայլ, մեկ գիտելիք>> Արշավ-սեմինար/One Step, One Knowledge' Camping seminar</p>	<p>Շատին համայնքում 2015թ.-ի սեպտեմբեր ամսից համայնքի երիտասարդների նախաձեռնությամբ և գյուղապետարանի աջակցությամբ սկսվել է <<Մեկ քայլ, մեկ գիտելիք>> արշավ-սեմինարը: Արշավ- սեմինարը նախատեսված է 14-</p>	<p>1 տարի/1 year</p>	<p>Հեռավոր պատմամշակութային վայրեր այցելելու համար անհրաժեշտ տրանսպորտային ծախս: Սնունդը և անհրաժեշտ գրենական պիտույքները</p>

	<p>տարեկանից բարձր անձանց համար: Արշավ-սեմինարի նպատակն է ծանոթանալ պատմամշակութային վայրերին, քննարկել շատ թեմաներ կապված համայնքի զարգացմանը նպաստող խնդրների լուծման, երիտասարդների ակտիվության բարձրացման, նոր գաղափարների հայտ գալու և իրականացման, հետաքրքիր ժամանցի կազմակերպման և մի շարք այլ հարցերի հետ: / From September 2015 with community youth initiation and Village administration support the 'One Step, One Knowledge' camping seminar started in Shatin community. The camping seminar is designed for people 14y.o. or older. Its aim is to familiarize themselves with cultural and historical landmarks, discuss many topics related to the resolution of problems in community development, youth activity, increase the emergence and implementation of new ideas, exciting entertainment and a variety of other issues.</p>		<p>ապահովվում է Շատինի գյուղապետարանի կողմից: / Transportation expenses for visiting distant historical places. Food and necessary stationary items will be provided by Shatin village administration.</p>
<p>8. Խաչմերուկի կանաչապատում/ Planting of intersection</p>	<p>Շատին-Մարտունի մայրուղու խաչմերուկի հատվածում իրականացնել շրջանաձև կանաչապատում, գեղեցկացնել համայնք մտնող հատվածը (գաղափարը առաջարկվել է համայնքի երիտասարդների կողմից <<ՄԵԿ ՔԱՅԼ, ՄԵԿ ԳԻՏԵԼԻՔ>> արշավ-սեմինարների ընթացքում): / Implement a circular landscaping in the intersection of Shatin-Martuni highway to beautify the part leading to the community (the idea was suggested by community youth during 'One Step, One Knowledge' camping seminar).</p>	<p>2 ամիս/2 months</p>	<p>Տարբեր տեսակի ծաղիկների, սերմերի, խոտաբույսերի, ներկերի (նախատեսվում է այդ հատվածը շրջապատել փոքր քարերով և ներկերը անհրաժեշտ են քարերը ներկելու համար) ձեռք բերում՝ 150,000 ՀՀ դրամ: Ընթացիկ աշխատանքները կիրականցվեն գյուղապետարանի աջակցությամբ՝ համայնքի ակտիվ երիտասարդների մասնակցությամբ, որոնք կապահովեն նաև</p>

			<p>կանաչապատված հատվածի հետագա պահպանումը:/ Purchase of different types of flowers, seeds, herbs, paints (It is intended to surround that part with small stones and paints are necessary for painting the stones): 150,000 AMD. Ongoing activities will be implemented with the support of the municipality, with the active participation of young people, who will ensure the further maintenance of the green sector.</p>
<p>9. Շատիվանքում տաղավարի տեղադրում/Installation of the pavilion in Shativank</p>	<p>Շատիվանքը գտնվում է Շատին գյուղից մոտ 4կմ դեպի արևելք, համանուն ձորակի աջ ափին: Հիմնադրվել է Սյունյաց Սմբատ, Սահակ իշխանների և Սոփիա տիկնոջ հրամանով 929թ.-ին: Բաղկացած է եկեղեցուց և վանական միաբանության բնակելի այլ շենքերից: Եկեղեցին կոչվել է սբ. Սիոն: Վանքն իր անունն ստացել է Վերին Նորավանքի առաջնորդ Շատիկ Մենակյացի անունից: Վերակառուցվել է 17-րդ դարի երկրորդ կեսին՝ ջուղայեցի հարուստ վաճառականների նախաձեռնությամբ: Շատիվանքին կից տարածքում տեղադրել հանգստի տաղավար, որտեղ արդեն առկա է խմելու ջուրը:/ Shativank Monastery is located on the right bank of the same name canyon about 4 km to the east of Shatin village. It was founded by the order of Syunik's Smbat, Sahak princes and his wife Sophia in 929 BCE. It consists of a church and other residential buildings of the Congregation. The church was called St. Sion.</p>	<p>2 ամիս/2 months</p>	<p>1 տաղավար, 400,000 ՀՀ դրամ/1 pavilion, AMD 400,000</p>

	<p>The monastery was named after Verin Noravank's leader Shatik Menakyats. In the second half of 17th century it was rebuilt by wealthy merchants from Julfa.</p> <p>To put a resting pavilion next to Shativank Monastery, where drinking water is already present.</p>		
<p>10. Փոխանակման ծրագիր/Exchanging program</p>	<p>Քանի որ <<Որդեգրիր մի գյուղ>> ծրագրի շրջանակներում համագործակցելու ենք Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայ համայնքների հետ, իսկ նշված երկրներն ունեն զարգացած գյուղատնտեսություն և համայնքներ, շատ օգտակար կլիներ կազմակերպել փոխանակման ծրագիր, որի ընթացքում մեր համայնքների ներկայացուցիչները տեղում կձանոթանային այդ երկրիների համայնքների փորձին, կիրառվող մեթոդներին և ստացած փորձն ու գիտելիքները կկիրառեին մեր համայնքներում: Ինչպես նաև այդ երկրներից ներկայացուցիչ կարող է գալ մեր համայնք կիսվելու իրենց փորձով: / Since we are going to collaborate with Armenian communities in Australia and New Zealand within the Adopt a Village program, and those countries have developed agriculture, it would be very helpful to arrange a program of technical assistance, during which our representatives will get acquainted with the experience of those countries, used methods and the gained experience and knowledge will be used in our communities. As well the specialist-representative from those countries can visit the community to share their experience.</p>	<p>2 շաբաթ/2 weeks</p>	<p>Կազմակերպել փոխանակման ծրագիր, ծանոթանալ համայնքների աշխատանքին և հնարավոր մեթոդները կիրառել մեր իսկ համայնքներում: / To arrange an exchange program to learn about the work and the methods used in communities and use possible methods in our communities.</p>
<p>11. Խողովակաշարի անցկացում/ Pipeline</p>	<p>Քանի որ Շատին համայնքը աչքի է ընկնում իր գեղեցիկ բնությամբ և հնագույն մշակութային կոթողներով, այդ իսկ պատճառով համայնք են այցելում բազմաթիվ տուրիստներ: Համայնքն ունի</p>		<p>Խողովակներ, 450,000 ՀՀ դրամ/Pipelines, AMD450,000</p>

	<p>4 հյուրատուն սակայն չկա խմելու ջուր, դրա համար պետք է անցկացվի խողովակաշար, որից հետո հյուրատները կապահովվեն խմելու ջրով, ինչպես նաև կգարգանա տուրիզմը համայնքում:/ There are many tourists visiting Shatin community because of its natural beauty and ancient cultural monuments. The community has 4 guest houses but there is no drinking water. Therefore we need a pipeline, which will supply drinking water to the guest houses, as well as assisting tourism develop in the community.</p>		
<p>12. Խաղահրապարակ/Playground</p>	<p>Ինչպես նշեցինք համայնքը մեծ է և ունի 2119 բնակչություն, սակայն համայնում չկա խաղահրապարակ, որտեղ երեխաները կարող են ազատ ժամանակ խաղալ և շփվել միմյանց հետ: Ունենալով խաղահրապարակ կնպաստենք մեր փոքրիկների անհոգ և գեղեցիկ մանկությունը ավելի պայծառ ու լուսավոր անցկացնելուն:/ The community is large and has a population of 2119 people, but there is no playground where children could play and communicate with each other. A children's playground will promote a healthy environment and child welfare.</p>		